ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

«ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2020-2025թթ

ք.Արթիկ 2020թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ---------- 2

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆԸ ---------- 3

ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ --3

ՔՈԼԵՋՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ---------- 5

ՔՈԼԵՋԻ ՀԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ---------- 6

ՔՈԼԵՋԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԸ - 7

ՆՊԱՏԱԿ 1. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ---------- 7

ՆՊԱՏԱԿ 2. ՈՐԱԿՅԱԼ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ ---------- 9

ՆՊԱՏԱԿ 3. ԲԱՐԵԿԱՐԳ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԲԱԶԱ ---------- 11

ՆՊԱՏԱԿ 4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ---------- 12

ՔՈԼԵՋԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ---------- 13

ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ԱՐՏԱՔԻՆ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) ---------- 14

ՎԵՐՋԱԲԱՆ ---------- 16

ՆԱԽԱԲԱՆ

Ըստ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքին պետական քաղաքականության հիմքերից է ստեղծել պայմաններ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի բնականոն գործունեության զարգացման համար, որի կազմակերպչական կարևորագույն հիմքերց է հանդիսանում քոլեջի զարգացման ծրագիրը: Այն նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը: Եթե քոլեջի աշխատանքային պլանը հիմնականում ուշադրություն է դարձնում ուսումնական հաստատության ընթացիկ խնդիրների լուծմանը, ապա զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես քոլեջի ռազմավարական պլան, որն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան, ոչ միայն ամենօրյա, այլն երկարատև լուծում պահանջող խնդիրների կարգավորմանը:

Քոլեջի զարգացման 2020-2025 թթ ռազմավարական ծրագիրը մշակվել է՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագրի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերի և զարգացման հայեցակարգերի վրա՝ հաշվի առնելով Արթիկ համայնքի և նրա տարածաշրջանի առանձնահատկությունները :

Հիմք ընդունելով քոլեջի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով գերակա ուղղություններն ու ռազմավարությունը: Ծրագիրը ենթակա է մշտադիտարկման ու առաջընթացի պարբերական գնահատման և կարող է վերանայվել նոր իրողություններին համապատասխան:

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Արթիկի պետական քոլեջը կրթական և մշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Քոլեջը, օգտագործելով իր մարդկային և նյութական ռեսուրսներ ու կարողություններ, ձգտում է բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով որակյալ մասնագետներ: Այն հանդես է գալիս որպես գիտելիք ու առաջավոր տեխնոլոգիաներ տարածող, ուսանողակենտրոն կրթական միջավայր ու կրթության լայն մատչելիություն ապահովող հաստատություն: Քոլեջը, ընդունելով հասարակության առջև իր պատասխանատվությունը, այնտեղ է նպաստի անհատի շարունակական զարգացմանը՝ ստեղծելով նպաստավոր միջավայր ազգային արժեքների ոգով դաստիարակված քաղաքացու համակողմանի ձևավորման համար:

ՔՈԼԵՋԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Առանձնահատուկ կարևորում եմ քոլեջի գործունեության հիմքում ամրագրել ներքոնշյալ սկզբունքները.

- Հավասարության սկզբունք՝ արդարության կոնտեքստում

Պարտականությունների և իրավունքների իրացման գործընթացում ուսանողների, դասախոսների և ուսումնաօժանդակ անձնակազմի հավասարություն:

- Անհատական մոտեցման սկզբունք

Անհատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողի՝ ճիշտ գնահատելով վերջինիս ունակություններն ու կարողությունները, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատակցի՝ հաշվի առնելով նրանց հմտություններն ու անձնային որակները:

- Ներառականության սկզբունք

Սահմանափակ կարողություններ ունեցող անձանց ինտեգրում:

- Պրակտիկության սկզբունք

Դասապրոցեսի և ուսումնական գործընթացի պրակտիկ ուղղվածություն՝ մեծացնելով գործնական աշխատանքների քանակը և կյանքում առավել կիրառելի հմտությունների ձեռքբերմանն ուղղված քայլերը:

- Ինքնուրույնության սկզբունք

Գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնություն:

- Կրթության որակի շարունակական բարելավման սկզբունք

Նորարարական մեթոդների կիրառում դասապրոցեսում և ուսումնական գործընթացում՝ դրանք համապատասխանեցնելով արտաքին միջավայրի պահանջներին:

- Ժողովրդավարական կառավարման սկզբունքների կիրառում և բազմակարծություն

Որոշումների կայացման գործընթացում դասախոսական,վարչական, ուսումնաօժանդակ աշխատակազմի և ուսանողների ներգրավվածություն՝ ելնելով խնդրի ուղղվածությունից և բովանդակությունից:

- Օրենքի գերակայության սկզբունք

Աշխատել օրենքի տառին և ոգուն համապատասխան:

Ներկայացնեմ նաև այն արժեքները, որոնց շեշտադրմամբ պետք է առաջնորդվեմ քոլեջի կառավարման գործընթացում.

- վիճակագրած հարգանք
- հայրենասիրության բարձր զգացում
- օրինապաշտ և իրավունքի քաղաքացու դաստիարակում
- ազնվություն
- ճշտապահություն
- վեհսրտություն և ներողամտություն:

ՔՈԼԵՋՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արթիկի պետական քոլեջը հիմնադրվել է 1965 թվականին՝ որպես Լենինականի շինարարական տեխնիկումի մասնաճյուղ: 1966 թվականին այն վերակազմավորվել է և սկսել գործել որպես Արթիկի ինդուստրիալ – տեխնոլոգիական տեխնիկում: 1999 թվականի դեկտեմբերի 3 - ի ԿԳՆ կոլեգիայի թիվ 2/7 Ե որոշմամբ տեխնիկումը վերանվանվել է ,Արթիկի պետական քոլեջ պետական ոչ առևտրային կազմակերպության: Քոլեջը ՀՀ ԿԳ նախարարության կողմից արժանացել է Ոսկե մեդալի՝ կրթության բնագավառում ունեցած մեծ ձեռքբերումների համար:

,Արթիկի պետական քոլեջ ՊՈԱԿ-ը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որը գործում է իր կանոնադրության համապատասխան և իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

2020-2021 ուստարում քոլեջում սովորում են 297 ուսանող: Նրանցից 263-ը սովորում են պետական պատվերի ուսուցման համակարգում , իսկ 34-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Ձևավորված է 25 խումբ, կուրսերի միջին խտությունը՝ 12 ուսանող:

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է իրականացնում թվով 7 մասնագիտություններով՝

- 0411 – ,Հաշվապահական հաշվառում՝ հիմնական ընդհանուր կրթությամբ /3 տարի տևողությամբ/
- 0421 – ,Իրավագիտություն՝ միջնակարգ ընդհանուր կրթությամբ / 2 տարի տևողությամբ/
- 0114 - ,Ֆիզիկական կուլտուրա և սպորտ՝ հիմնական ընդհանուր կրթությամբ /4 տարի տևողությամբ/
- 0212 - ,Դիզայն՝ միջնակարգ ընդհանուր կրթությամբ՝ /2 տարի 6 ամիս տևողությամբ/
- 0723 - ,Հագուստի պատրաստման տեխնոլոգիան՝ հիմնական ընդհանուր կրթությամբ / 3 տարի 6 ամիս տևողությամբ/
- 0613 – ,Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում՝ հիմնական ընդհանուր կրթությամբ / 4 տարի տևողությամբ/

• 1041 – Փոխադրումների կազմակերպում ու կառավարում տրանսպորտում՝ հիմնական ընդհանուր կրթությամբ /3 տարի 6 ամիս տևողությամբ/

Քոլեջը կարող է իրականացնել ընդունելություն նաև հեռակա ուսուցմամբ՝ հետևյալ բաժիններում՝

• 0411 – Հաշվապահական հաշվառում՝ միջնակարգ ընդհանուր կրթությամբ /2 տարի տևողությամբ/

• 1041 – Փոխադրումների կազմակերպում ու կառավարում տրանսպորտում՝ միջնակարգ ընդհանուր կրթությամբ /3 տարի 7ամիս տևողությամբ/

ՔՈԼԵՋԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Արթիկի պետական քոլեջի բարեփոխումները կսկսեմ գործաղիր մարմնի՝ տնօրենի պաշտոնում ընտրվելուց անմիջապես հետո:

Քոլեջի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներն են՝

• Լոկալ ցեռուցման համակարգի բացակայությունը քոլեջի ուսումնական մասնաշենքում և մարզադահլիճում,

• անբավարար է ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հասանելիությունը և կիրառումը ուսումնական գործընթացում. կա ուսումնական էլեկտրոնային նյութերի պակաս,

• բարեգործման կարիք ունեն քոլեջի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմները,

• քոլեջի ղեկավարման բոլոր մակարդակներում կա անձնակազմի կառավարչական կարողությունների, ինչպես նաև կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն,

• թերի է քոլեջ - գործատու համագործակցությունը,

• Արթիկի տարածաշրջանի դպրոցներում կա քոլեջի կողմից իրականացվող ծրագրերի իրազեկվածության պակաս:

ՔՈԼԵՋԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԸ

ՆՊԱՏԱԿ 1. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 1. 1

Դիմորդների ընդունելության կառավարչական և կազմակերպչական աշխատանքների համակարգի բացակայություն: Դիմորդների և ուսանողների կազմի պահպանումը և ավելացումը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐ

- Ընդունելության հանձնաժողովը ձևավորելուց հետո կազմակերպել հանձնաժողովի անդամների կարճաժամկետ վերապատրաստումներ:
- Ընդունելության գործընթացը կազմակերպել նորարարական լուծումներով, ինչպիսին է դիմումների ընդունման առցանց համակարգը:
- Միջնաժամկետ ժամանակահատվածում ստեղծել քոլեջի ինտերնետային կայք-էջ:
- Ընդունելության գործընթացում ներգրավել քոլեջի ամբողջ դասախոսական կազմին և ուսանողներին:
- Ընդլայնել ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ուսումնառողների կարիերայի պլանավորման խորհրդատվության տրամադրման ծառայություններ:
- Ընդլայնել համագործակցող հասարակության դպրոցների շրջանակը, պարբերաբար կազմակերպել այցելություններ դպրոցներ և ապագա դիմորդների ճանաչողական այցեր քոլեջ՝ վերջինիս կրթական հնարավորությունները ներկայացնելու համար:

Արթիկի պետական քոլեջում կան մասնագիտություններ, որոնց գծով ուսանողների հոսքը կտրուկ սակավացել է, ինչը պայմանավորված է աշխատաշուկայում այդ մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի նվազմամբ: Գտնում եմ, որ սովորողների որակական և քանակական աճը ցանկացած կրթական հաստատության կարևոր նպատակներից մեկն է: Նման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել արտաքին միջավայրի փոփոխությունները՝ հատկապես ժողովրդագրական փոփոխությունները, աշխատաշուկայի ծավալները և կադրային պահանջարկը, տնտեսության զարգացման հեռանկարները: Քոլեջը պետք է

կարողանա կազմակերպել դինամիկ պլանավորման գործընթաց՝ արագ արձագանքելով և հարմարվելով միջավայրի փոփոխություններին:

Քոլեջի մրցունակությունը և վարկանիշը առաջին հերթին որոշվելու են իրականացվող կրթական ծրագրերի որակով, շրջանավարտների կողմից իրենց մասնագիտական ու բարոյաէթիկական պարտականությունների կատարմամբ: Հաշվի առնելով քոլեջի գործունեության վերլուծության արդյունքները՝ նախատեսվում է սկսել հասարակության արդի պահանջներին և եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծառայությունների մատուցման գործընթաց՝ այն ուղղելով ուսանողակենտրոն համակարգի ստեղծմանը: Քոլեջի զարգացման ռազմավարության նպատակն է բավարարել աշխատաշուկան բարձրակարգ մասնագետներով, պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ ավարտողներին լիարժեք կերպով դրսևորելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր: Քոլեջը պետք է ձգտի ձևաք բերել և պահպանել ուսանողների վստահությունը կրթության նկատմամբ՝ որակի ապահովման արդյունավետ գործողություններով, որոնք պետք է երաշխավորեն մասնագիտական կրթական ծրագրերի պատշաճ մակարդակը, մշակվածությունը ու պարբերաբար արդիականացումը:

Խնդիր 1. 2

Ուսանողների կրթական և մասնագիտական կարիքների լիարժեք բավարարմանն ուղղված օժանդակ ծառայությունների ներդրումը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐ՝

- Կարճաժամկետ ժամանակահատվածում մշակել ուսուցման տարբեր մոտեցումներից և մեթոդներից բավարարվածության գնահատման չափանիշներ և ըստ դրանց գնահատել ուսանողների բավարարվածությունը քոլեջում ստացած իրենց կրթությունից:
- Մշակել սովորողների տարեվերջյան հարցումների և գնահատման համակարգ:
- Ծրագրային վերակառուցման ընթացքում ձևավորել սովորողների տեսական և գործնական աշխատանքների ժամաքանակների միջև ռացիոնալ հարաբերակցություն:

• Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր:

• Զարգացնել ուսանողների տեղեկատվական, խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման և աշխատատեղերի որոնման օժանդակության ծառայությունները:

• Կարճ ժամանակահատվածում ավելի մեծացնել համագործակցային կապերը աշխատաշուկայի հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:

Խնդիր 1. 3

Դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների բարելավում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐ

• Զարգացնել դասախոսական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, ներդնել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:

• Ներդնել արդյունքահեն գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա:

• Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության ժամանակակից փորձը՝ կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:

ՆՊԱՏԱԿ 2. ՈՐԱԿՅԱԼ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ

ԽՆԴԻՐ 2. 1 Բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը, պահպանումը, վերջիններիս մասնագիտական առաջընթացի ապահովումը: Որակյալ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ապահովումը:

Անհրաժեշտ քայլեր

• Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և զարգացման հանձնաժողովի ստեղծում:

• Աշխատանքի ընդունման մրցութային համակարգի ներդրում բոլոր ուղղություններով (հարցազրույցների անցկացում,գիտելիքների ստուգման թեստային համակարգ և այլն)

- Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի համար:
- Յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար դասախոսական կազմին ներկայացվող պահանջների և չափանիշների մշակում:
- Դասախոսական կազմի՝ ուսանողների կողմից պարբերաբար գնահատման մեխանիզմների ներդրում
- Մշակել և կիրառել դասախոսների մասնագիտական վերապատրաստման մեխանիզմներ:
- Մշակել և կիրառել վարչական, ուսումնաօժանդակ կազմի գործունեության որակի ապահովման ընթացակարգ և մեխանիզմներ:
- Քայլեր ձեռնարկել խաստումնալից կադրերի խրախուսման, մոտիվացիայի բարձրացման, պահպանման, երիտասարդ նոր կադրերի ներգրավման ուղղությամբ:
- Կատարել կադրերի հստակ պլանավորում, սահուն սերնդափոխության ապահովում, ինչպես նաև, ելնելով ժամանակակից տեխնոլոգիական պահանջներից, օպտիմալացնել համակարգը՝ կատարելով հաստիքների կրճատում կամ նորերի ավելացում:
- Խրախուսել դասախոսական կազմի ինքնակրթությունը:
- Ներդնել դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմ՝ ըստ գործունեության արդյունքների և աշխատանքի արդյունավետության:

Նպատակներս կարող եմ իրականություն դարձնել միայն բանիմաց, ժամանակակից կրթական պահանջներին համընթաց քայլող, պատրաստակամ մանկավարժների ուժգոր թիմի շնորհիվ, որը կկարողանա իրականացնել քոլեջի դրդեգրած քաղաքականությունը:

Խնդիր 2. 2 Կատարելագործել քոլեջի կառավարման համակարգը և բարձրացնել դրա արդյունավետությունն ու որակը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐ

- Հստակեցնել լիազորությունների և պատասխանատվության բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև և խստորեն հետևել դրանց իրականացմանը:
- Զարգացնել ուսանողական ինքնավարությունը քոլեջում՝ ընդլայնելով և խորացնելով սովորողների մասնակցությունը քոլեջի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:
- Իրականացնել սովորողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում:

ՆՊԱՏԱԿ 3. ԲԱՐԵԿԱՐԳ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԲԱԶԱ

Խնդիրների նկարագրություն

Արթիկի պետական քոլեջն ունի ուսումնական յորսհարկանի քարից մասնաշենք, , տիպային երկհարկ մարզադահլիճ, ճաշարանի համար նախատեսված առանձին կառույց, լացոթյա սպորտային հրապարակ և կանաչապատ, ցանկապատված բակ: Վերջիններս գտնվում են ոչ բարեկարգ վիճակում և ունեն վերանորոգման ու խնամքի կարիք, ճաշարանը չի գործում: Քոլեջում բացակայում է ջեռուցման համակարգը, ինչը խոչընդոտում է ձմռան ամիսներին դասապրոցեսի լիարժեք կազմակերպմանը: Պատշաճ վիճակում չեն գտնվում սանհանգույցները: Քոլեջում չի գործում բուժկետ՝ մասնագետ չլինելու պատճառով:

Քոլեջն ունի միջին հագեցվածությամբ համակարգչային լսարան , որն ապահովված է ինտերնետ կապով: Շտապրման ու նորացման կարիք ունեն լսարանները, աստրկայական կաբինետները, ինչպես նաև լաբորատորիաները:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐ

- Իրականացնել քոլեջի մասնաշենքերի վերանորոգման տարբերակված ծրագրեր: Առաջնահերթ են մարզադահլիճի տանիքը, հանդերձարաններն ու սանհանգույցները:

- Հնարավորինս սեղմ ժամկետներում կազմակերպել ջեռուցման համակարգի ներդրման գործընթացը:
- Մշակել և իրականացնել օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործման ծրագրեր:
- Ապահովել լաբորատորիաների պատշաճ կահավորում՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նորագույն սարքավորումներով:
- Ստեղծել կրթական ռեսուրսների ֆոնդ, որտեղ տեղ կգտնեն ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային և դասախոսների կողմից մշակված ուսումնական նյութեր:
- Հաշարանի վերազործարկում՝ հաշվի առնելով ուսանողների սոցիալական վիճակը:
- Սահմանափակ կարողություններով անձանց տեղաշարժն ապահովող շենքային պայմաններ, մասնավորապես՝ թեքահարթակների կառուցում, սանհանգույցների ձևափոխում և այլն:
- Լաբորատորիաներում և առարկայական կաբինետներում առկա գույքի լիարժեք և նպատակային օգտագործում:
- Բուժկետի ստեղծում՝ համապատասխան մասնագետով և անհրաժեշտ բժշկական նյութերով:

ՆՊԱՏԱԿ 4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Խնդրի նկարագրություն

Քոլեջի որակի ապահովման խնդրի արդիականությունը պայմանավորված է գործընթացներով, որոնք այսօր տեղի են ունենում ՀՀ կրթության համակարգում: Այն է որակի ապահովման նկատմամբ քոլեջի պատասխանատվության բարձրացումը, ինչպես նաև տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին ու կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի վերանայումն ու արդիականացումը:

Վերոհիշյալ գործընթացներ հիմք են հանդիսանում զարգացման ռազմավարական ուղղությունների և ծրագրերի մշակման համար, որոնց հիմնական նպատակը որակի ապահովման ներքին համակարգի ձևավորումն է: Այս առումով հատկապես կարևորվում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ ուսուցման որակի ապահովման ներքին համակարգի ձևավորումն ու ներդրումը, առաջարկվող կրթական ծրագրերի (մասնագիտությունների անվանացանկի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի) վերանայումն ու համապատասխանեցումն աշխատաշուկայի արդի պահանջներին:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐ

- Մշակել քոլեջի ներքին որակի ապահովման համակարգի ձևավորման հայեցակարգն ու կազմակերպական սխեման՝ գործառույթների հստակ տարանջատմամբ և համապատասխան ընթացակարգերի սահմանմամբ:
- Ներքին որակի ապահովման համակարգի ձևավորման գործընթացում ներգրավել համապատասխան մասնագետի, ով պատասխանատվություն կկրի գործընթացի լիարժեք կազմակերպման համար:
- Մշակված որակի ներքին ապահովման համակարգի շրջանակներում նախապատրաստել և իրականացնել քոլեջի ստորաբաժանումների գործունեության վերլուծություն:
- Ապահովել որակի գնահատման գործընթացների թափանցիկությունը և ընթացիկ արդյունքների հրապարակայնությունը:

ՔՈԼԵՋԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնահատուկ կարևորություն պետք է տալ քոլեջի ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ համակարգմանը: Ինչպես գիտենք, քոլեջի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հիմնական ծրագրի՝ կախված պետական պատվերի համակարգում սովորողների թվից, նաև արտաբյուջետային միջոցներից, որը ձևավորվում է վճարովի համակարգում սովորողների վարձավճարներից:

Սույն զարգացման ռազմավարական ծրագրում նշված խնդիրների լուծումը նախատեսում եմ իրականացնել ինչպես առկա բյուջեի արդյունավետ տնօրինման սահմաններում, այնպես էլ արտաբյուջեի ֆինանսական հոսքերի ավելացման հաշվին՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները, մասնավորապես՝

- կազմակերպել և անցկացնել մասնագիտական ուսուցման կարճաժամկետ վճարովի դասընթացներ՝ ապահովելով անհրաժեշտ նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազա,
- օրենքով սահմանված կարգով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,
- համագործակցելով գործարարների, հիմնադրամների, քոլեջի հաջողակ շրջանավարտների և այլ անհատ բարեգործների հետ՝ խրախուսել նրանց կողմից քոլեջի ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները,
- մասնակցել ,Զբաղվածության պետական գործակալության կողմից հայտարարվող ծրագրերի շուրջ բանակցություններին,
- մասնակցել ,Պետական գնումների գործակալությունե ՊՈԱԿ-ի կողմից տարբեր կրթական ծրագրերով հայտարարվող պարբերական մրցույթներին:

Կարևորում եմ յուրաքանչյուր տարի ամփոփել նախորդ տարվա ընթացքում կատարած ֆինանսական ծախսերը՝ ներկայացնելով հաշվետվություն՝ ապահովելով թափանցիկությունն ու իրազեկվածությունը:

Քոլեջի գործունեության ուժեղ և թույլ կողմերի , արտաքին հնարավորությունների և վտանգների վերլուծություն (SWOT վերլուծություն)

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. Արթիկի տարածաշրջանի միակ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն լինելը:	1. Ուսանողների թվի անկում՝ որոշ մասնագիտությունների գծով: 2. Կիրառվող դասավանդման,

2. Քոլեջում տիրող բարոյահոգեբանական և աշխատանքային առողջ մթնոլորտը: 3. Բավարար ֆինանսական միջոցները: 4. Օգտագործված, սակայն պիտանի նյութատեխնիկական բազան: 5. Բարձր պահանջարկ ունեցող մասնագիտություններ: 6. Հիմնականում պետական բուհերի շրջանավարտ-դասախոսների առկայությունը:	ուսումնառության և գնահատման մեթոդների ոչ միշտ համահունչ լինելը ակնկալվող կրթական վերջնարդյունքներին և ժամանակի պահանջներին: 3. Հեռավար ուսուցման ծառայությունների բացակայություն: 4. Ոչ բարենկարգ վիճակում գտնվող մասնաշենքեր, ոչ բավարար նյութատեխնիկական բազա: 5. Դասախոսական անձնակազմի ցածր աշխատավարձ: 6. Քոլեջի աշխատակիցների շրջանում կենսաթոշակային տարիքի անձանց առկայության բարձր տոկոսայնությունը:
Հնարավորություններ	**Վտանգներ**
1. Ախատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող նոր մասնագիտությունների ներդրում: 2. Կարիերայի կենտրոնի հնարավորությունների ընդլայնում: 3. Ուսումնաարտադրական բազաների շահագործում՝ ինքնաֆինանսավորում ապահովելու նպատակով: 4. Հանրային, մասնավոր և միջազգային տարբեր կազմակերպությունների, գործատուների հետ համագործակցություն: 5. Քոլեջի ներգրավվածության ակտիվացումը տարբեր ձևաչափերի հանրային միջոցառումներում:	1. Արթիկի տարածաշրջանի բնակչության եկամուտների ցածր մակարդակը: 2. Շրջանավարտների թվի և աշխատաշուկայի պահանջարկի շարունակական անհամապատասխանությունը: 3. Վճարովի համակարգում տեղորոշ ուսանողների թվի անկում: 4. Երիտասարդ, նոր և բանիմաց կադրերի արտահոսքը մարզից դեպի Երևան: 5. Կորոնավիրուսի համաճարակը: 6. Արցախյան գոյամարտը: